

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ գիտական
կոդի 11/12/2018թ. թիվ
133 նիստում
Ա. ՍԱՐԳՍՅԱՆ



ԿԱՐԳ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ
ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆԻ ՊՐՈՖԵՍՈՐԱԴՍԱԽՈՍԱԿԱՆ
ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ԲԱՐՁՐԱՅՄԱՆ
(նոր խմբագրությամբ)

ԵՐԵՎԱՆ 2018 թ.

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

ՀՀ ԳԱԱ գիտակրթական միջազգային կենտրոնի (այսուհետ՝ Կենտրոն) մագիստրատուրայի պրոֆեսորադասախոսական անձնակազմի (այսուհետ՝ ՊԴԱ) որակավորումն ու վերապատրաստումը իրականացվում է ՀՀ բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին օրենքի 19-րդ հոդվածի դրույթներին համապատասխան և սույն կանոնակարգի հիման վրա: ՊԴԱ որակավորման և վերապատրաստման գործընթացի միջոցով կազմակերպվում և իրականացվում է Կենտրոնի ՊԴԱ մագիստրոսական կրթական ծրագրերով լրացուցիչ մասնագիտական կրթությունը: Որակավորումն ու վերապատրաստումը բաղկացած են ծրագրերից, որոնցով նախատեսված է տեսական և գործնական մեթոդների կիրառամբ դասախոսների վերապատրաստման և որակավորման կազմակերպումը:

Որակավորման գործընթացի շրջանակներում ՊԴԱ ստանում է շարունակական և լրացուցիչ մասնագիտական կրթություն՝ զարգացնելով ՊԴԱ մասնագիտական հմտություններն ու կարողությունները, տեսական և գործնական գիտելիքները՝ ժամանակակից գիտամանկավարժական, հետազոտական, համակարգչային հենքի վրա՝ բարձրագույն կրթության չափանիշներին համապատասխան:

2. ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ ԵՎ ԳՈՐԾԸՆԹԱՅԸ

2.1. ՊԴԱ որակավորման բարձրացման համակարգը ներդրվել և իրականացվում է բարձրագույն կրթության բարեփոխումների գործընթացի շրջանակներում, Կենտրոնի զարգացման ռազմավարությանը համապատասխան:

2.2. ՊԴԱ որակավորման գործընթացը ներառում է հետևյալ խնդիրները՝

- դասավանդման որակի բարձրացում, մեթոդիկայի կատարելագործում,
- մասնագիտական ոլորտում նորագույն տեխնոլոգիաների հմտությունների ձեռքբերում և կիրառում,
- մասնագիտական ոլորտում գիտական նոր հետազոտությունների և մեթոդների կիրառում և մասնակցություն,
- լրացուցիչ կրթություն՝ վերապատրաստումների, սեմինարների և գիտաժողովների կազմակերպում,
- հեռավար ուսուցման մեթոդների կիրառում և կիրարկում ՄԿԾ-ների շրջանակներում,

- ՄԿԾ-ների, նախագծերի, փաստաթղթերի և նյութերի պատրաստում, գիտական հետազոտությունների անցկացում,
- այլ ուսումնական հաստատությունների, բուհերի, միջազգային կազմակերպությունների ծրագրերի շրջանակներում համապատասխան որակավորում ունեցող մասնագետների և օտարերկրյա դասավանդողների կողմից սեմինարների և վերապատրաստումների իրականացում,
- ուսումնամեթոդական ձեռնարկների և ՄԿԾ-ների մշակում,
- մասնագիտական հմտությունների (գիտամանկավարժական մեթոդիկայի, հոգեբանական և այլն), առարկայական ծրագրերի, ուսումնամեթոդական փաթեթի, զնահատման ձևերի նորացում ու արդիականացում:

2.3. ՊԴԱ որակավորման արդյունավետ համակարգի ներդրման նպատակով Կենտրոնը համագործակցում է այլ բուհերի և միջազգային կազմակերպությունների հետ՝ իրականացնելով նաև խորհրդատվական գործունեություն:

3. ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ԵՎ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՅԸ

3.1. Որակավորման բարձրացման և վերապատրաստումների գործընթացը Կենտրոնի ՊԴԱ վերաորակավորման, մասնագիտական և հետազոտական վերապատրաստումների կազմակերպման միջոցով լրացուցիչ հմտություններ և գիտելիքներ ձեռք բերելու գործընթաց է: Որակավորման և վերապատրաստման գործընթացը Կենտրոնում կազմակերպվում և իրականացվում է ինստիտուցիոնալ մակարդակով, որում ներգրավվում են ինչպես Կենտրոնի վարչական անձնակազմը՝ (փոխտնօրենը, դեկանը, մասնագիտական ամբիոնների վարիչները), այնպես էլ ՀՀ ԳԱԱ գիտահետազոտական ինստիտուտները՝ իրենց գիտական և հետազոտական ամբողջ ներուժով:

3.2. **Մասնագիտական/հետազոտական** վերապատրաստումները կազմակերպվում և իրականացվում են ՀՀ ԳԱԱ այն ինստիտուտում, որի տարածքում տեղակայված է Կենտրոնի մասնագիտական ամբիոնը: Տվյալ ամբիոնի պատասխանատուների կողմից կազմակերպվում են գիտական միջոցառումներ, գիտաժողովներ, վերապատրաստման դասընթացներ, որոնց իրականացումը կյանքի է կոչվում տվյալ ինստիտուտի բոլոր ռեսուրսների, այդ թվում դրամաշնորհների հաշվին:

3.3. **Ընդհանուր մասնագիտական** դասընթացները իրականացվում են Կենտրոնում վերապատրաստումների և որակավորման համար նախատեսված դասընթացների միջոցով, որոնք կազմակերպվում են տվյալ մասնագիտական ուղղվածություն ունեցող Կենտրոնի

ենթակառուցվածքային ստորաբաժանումները, (մասնագիտական օտար լեզվի ամբիոն, ՏՏ բաժին, ՈԱ բաժին և այլն):

3.4. **Ընդհանուր մասնագիտական** դասընթացները կարող են նաև կազմակերպվել և անցկացվել Կենտրոնի տարածքում՝ ըստ նպատակահարմարության, եթե կոնկրետ դասընթացը պարտադիր բնույթ է կրում, և անհրաժեշտ է ապահովել մեծ լսարան: (հայոց լեզվի դասընթացներ, հռետորական արվեստի, ինֆորմացիոն տեխնոլոգիաների դասընթացներ):

3.5. ՊԴԱ յուրաքանչյուր դասախոս պարտավորվում է հինգ տարին մեկ մասնակցել վերապատրաստման կամ որակավորման բարձրացման դասընթացների՝ ըստ սահմանված տարակարգերի. պրոֆեսոր, դոցենտ՝ մասնագիտական և/կամ հետազոտական որակավորում, ավագ դասախոս, դասախոս՝ բարձրագույն մասնագիտական կուրսեր և/կամ մասնագիտական վերապատրաստում և որակավորման բարձրացում:

3.6. Որակավորման բարձրացման ծրագրի գործողության մասնագիտական/հետազոտական մասի վերապատրաստումների համար պատասխանատու է ԳԱԱ այն ինստիտուտը, որտեղ տեղակայված է Կենտրոնի ամբիոնը: Հետազոտական ինստիտուտը դասընթացները կազմակերպում է տվյալ ինստիտուտի ռեսուրսների և դրամաշնորհների հաշվին՝ գիտաժողովի, վերապատրաստումների, փորձի փոխանակման և այլ գիտական միջոցառումների միջոցով: Սահմանված ժամկետում (5 տարի) դասախոսը անհատական պլանով պարտավորվում է կատարել որակավորման ծրագրի պահանջները՝ ավելացնելով կրեդիտների քանակը:

3.7. Ծրագրի հնգամյա բեռնվածությունը կազմում է 30 կրեդիտ, որից 7-ը առարկայական կարողությունների զարգացման կառուցամասի մոդուլներն են, 6 կրեդիտը դասավանդման հմտությունների զարգացման կառուցամասի մոդուլներն են, 15 կրեդիտը հետազոտական կարողությունների զարգացման կառուցամասի մոդուլներն են: Ծրագրում 2 կրեդիտ հատկացվում է ամփոփիչ ատեստավորմանը՝ գիտական հաշվետվության ներկայացմամբ:

3.8. Որակավորման բարձրացման գործընթացի նկատմամբ վերահսկողությունը վերապահված է Կենտրոնի փոխտնօրենին:

3.9. Մասնագիտական ամբիոններում յուրաքանչյուր ուսումնական տարվա ավարտին ամփոփվում է որակավորման բարձրացման և վերապատրաստումների ծրագիրը, այնուհետև համապատասխան առաջարկություններով այն ներկայացնում են Կենտրոնի գիտխորհրդի քննարկմանն ու հաստատմանը:

4. ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ԲԱՐՃՐԱՑՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԸ, ՆԵՐԴՐՄԱՆ ԵՎ ԿԻՐԱՌՄԱՆ ԵՂԱՆԱԿՆԵՐԸ

4.1. Կենտրոնի որակավորման բարձրացման ծրագրի շրջանակներում վերանայվում և մշակվում են անմիջական և անուղղակի շահառուների՝ դասախոսների և ուսանողների ակտիվ մասնակցության ապահովման եղանակներն ու միջոցները:

4.2. Հնարավորության սահմաններում նվազեցնել Որակավորման բարձրացման ծրագրի պարտադիր բնույթ ունեցող բաղադրիչների թիվը, և ավելացնել կամընտրական բնույթի բաղադրիչները՝ նպաստելով ակադեմիական առողջ միջավայրի զարգացմանը:

4.3. Որակավորման բարձրացման ծրագրի արդյունավետության նպատակով բարձրացնել իրազեկվածության մակարդակը ամբիոններում և ուսանողության շրջանակում: Այդ նպատակով Կենտրոնում ներդրվում և գործարկվում է կառավարման էլեկտրոնային համակարգ, որով ապահովվում է ծրագրի տեղեկատվության հասանելիությունը:

4.4. Էլեկտրոնային համակարգում զետեղված են ծրագրում ներառված դասընթացների առարկայական ծրագրերն ու ժամանակացույցները, դասախոսների անհատական առարկայական ծրագրերն ու հավաքված կրեդիտների քանակը:

4.5. 2018-2023 թթ. որակավորման բարձրացման համակարգի ծրագրի շրջանակներում իրականացվելու է դասախոսների անհատական կարիքների գնահատում:

4.6. ՊԴԱ որակավորման ծրագրի շրջանակներում իրականացվում է նաև ինստիտուցիոնալ կարիքների գնահատում:

4.7. Որակավորման ծրագրի միջոցառումների հիմնական մասը կազմակերպվում է մասնագիտական ամբիոններում՝ մասնագիտական ուղղվածության դասընթացների և վերապատրաստումների առավել արդյունավետ և ճկուն եղանակներով իրականացման նպատակով:

4.8. Կենտրոնի որակավորման բարձրացման համակարգում ներդնել և գործարկել ՊԴԱ վերապատրաստումների և որակավորման հորիզոնական ուսուցման մեխանիզմը, որի միջոցով դասախոսները հնարավորություն կունենան մասնակցություն ունենալ դասալսումներին և դասընթացներին գործընկերային ուսուցման եղանակով:

4.9. Որակավորման բարձրացման համակարգում ներգրավել այլ ուսումնական հաստատություններից և օտարերկրյա բուհերից բարձր որակավորում ունեցող մասնագետների՝ Կենտրոնի բուհական համակարգում միջազգային փորձի փոխանակման և միջազգային լավագույն փորձի տեղայնացման նպատակով:

4.10. Որակավորման բարձրացման համակարգում առարկայական ծրագրերը տարակարգել ըստ վերապատրաստումների տեսակների.

- **Ընդհանուր/մասնագիտական**
- **հետազոտական/մասնագիտական դասընթացներ**

4.11. Ընդհանուր մասնագիտական դասընթացները կազմակերպում և իրականացնում են մասնագիտական ուղղվածության ամբիոնները՝ մասնագիտական օտար լեզվի ամբիոն, ինֆորմատիկայի ամբիոն, լեզվաբանության և խոսքի մշակույթի ամբիոն:

4.12. Հետազոտական/մասնագիտական դասընթացների վերապատրաստումները կազմակերպվում են Կենտրոնի մասնագիտական ամբիոններում՝ ՊԴԱ վերաորակավորման բարձրագույն նպատակով:

4.13. Բոլոր դասընթացները նախատեսված է իրականացնել անհատական և թիմային աշխատանքների, սեմինարների և հետազոտությունների, քննարկումների և գիտաժողովների միջոցով, հետազոտական դրամաշնորհների և արտաքին այլ միջոցների ներգրավմամբ:

4.14. Որակավորման բարձրագույն նպատակով Կենտրոնում իրականացվում է ՊԴԱ ինչպես ներբուհական, այնպես էլ միջազգային գիտաժողովներին և միջոցառումներին մասնակցությամբ և ներգրավվածությամբ, այդ թվում նաև Կենտրոնի կողմից դասախոսներին գործուղումներ ուղարկելու և որակավորումը բարձրացնելուն ուղղված աջակցությամբ և ծախսերը փոխհատուցելու միջոցով:

4.15. Դասախոսի արդյունավետ գործունեության, դասավանդման և որակավորման բարձրագույն նպատակով իրականացվում են միջոցներ, որոնցով կթեթևանա դասախոսի ծանրաբեռնվածությունը: Ներդնել դասախոսի օգնականի ինստիտուտ:

5. ՊԴԱ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ԲԱՐՃՐԱԳՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԱՍՓՈՓՈՒՄԸ

5.1. Կենտրոնի ՊԴԱ որակավորման բարձրագույն ծրագրի և վերապատրաստման դասընթացների արդյունքները ամփոփվում են Կենտրոնի ուսումնական մասի կողմից հաստատված ուսումնական պլանների չափանիշներին համապատասխան:

5.2. Դասընթացների արդյունքների ամփոփումը իրականացվում է ատեստավորման միջոցով, որի ընթացքում ստուգվում և գնահատվում է Ծրագրով սահմանված չափանիշների և պահանջների կատարումը:

5.3. Ատեստավորման փուլն անցնելուց հետո դասախոսը պատրաստում է հաշվետվություն՝ Ծրագրով սահմանված պահանջների կատարման մասին, և ներկայացնում համապատասխան ամբիոն և Կենտրոնի որակի ապահովման (ՈԱ) բաժին:

5.4. Որակի ապահովման բաժինը որակավորման բարձրագույն ծրագրի շրջանակներում իրականացված դասընթացների ամփոփիչ արդյունքների հիման վրա կատարում է համապատասխան վերլուծություններ և ներկայացնում Կենտրոնի գիտական խորհրդին:

5.5. ՊԴԱ որակավորման բարձրագույն ծրագիրը հաստատվում է Կենտրոնի գիտական խորհրդի նիստում: